

ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստան-Թուրքիա յարաբերությունների հարցով հրապարակուած արձանագրությունների ազգավնաս կետերի լուսաբանման եւ այդ արձանագրությունների ստորագրման դէմ համագաղութային կեցուածք ընդունելու ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի կազմակերպած միջոցառումների շրջանակում, Երեքշաբթի, Մեպտեմբերի 15-ի երեկոյեան ժամը 7:30-ին տեղի ունեցաւ զեկուցական-խորհրդակցական հանդիպում՝ գաղութիս կրթական, հասարակական, հայրենակցական կազմակերպությունների եւ մտաւորականութեան աւելի քան 60 ներկայացուցիչների հետ՝ Հայ Օգնութեան Միութեան կենտրոնատեղիի ժողովասարահում:

Հանդիպման բացումը կատարեց Կեդրոնական Կոմիտէի Հանրային Կապի գրասենեակի պատասխանատու Մարօ Նազարեանը, որն անդրադառնալով հանդիպման նպատակին, մասնաւորապէս ընդօժեց Արեւմտեան Հայաստանը խորհրդանշող հայրենակցական միությունների մասնակցութիւնը սոյն արշաւին եւ հրաւիրեց ինչպէս հայրենակցական միությունների, այնպէս էլ հանդիպմանը ներկայ միւս կազմակերպությունների ներկայացուցիչներին, որ «Ասպարէզ»ին ուղարկեն իրենց տեսակետներն ու կարծիքները՝ թերթում հրատարակուելու համար: Այնուհետեւ նա բեմ հրաւիրեց Կեդրոնական Կոմիտէի անդամ Արամ Գալուստեանին՝ արձանագրությունների նկատմամբ ՀՅԴաշնակցութեան ընդունած դիրքորոշման մասին մանրամասնութիւններ ներկայացնելու համար: Յիշելով, որ հայ-թուրքական յարաբերությունների գործընթացը հիմնականում սկիզբ առաւ TARC կոչուող հայ-թուրքական վերահաշտութեան տխրահոշակ յանձնաժողովի աշխատանքներով, որոնք կարճ ժամանակ անց մատնուեցին կատարեալ ձախողութեան, Արամ Գալուստեանը հանգամաօրէն վերլուծեց, այսպէս կոչուած, ֆուտբոլային քաղաքականութեան եւ դրան հետեւած Հայաստան-Թուրքիա յարաբերությունների հարցով արձանագրությունների վտանգաւոր եւ ազգավնաս հետեւանքները՝ հայ ժողովրդի ընդհանրական շահերի եւ Հայ Դատի հետապնդման տեսակետից: Եզրափակելով իր զեկուցական ելոյթը, նա կոչ արեց ներկաներին, որ համախմբուելով ՀՅԴաշնակցութեան դիրքորոշման շուրջը, հանդէս գան արձանագրությունների վնասակար կետերը հիմնովին փոխելու, իսկ հակառակ դէպքում՝ այն ձախողեցնելու միասնական պահանջով:

Այնուհետեւ առիթ տրուեց ներկաներին, որ արտայայտեն իրենց տեսակետներն ու կարծիքները սոյն արձանագրությունների վերաբերեալ: Դատապարտելով եւ բռուն կերպով քննադատելով արձանագրությունների մէջ

տեղ գտած ազգավնաս նախատեսումները, նրանք կոչ արեցին Հայաստանի իշխանություններին, մասնաւորաբար նախագահ Սերժ Սարգսեանին, որ մերժեն եւ ոչ մի գնով չստորագրեն սոյն արձանագրությունները:

Հանդիպման աւարտին, որին մասնակցում էին Վասպուրականի, Համախարբերդի, Չորք Մարգպանի, Ուրմիայի հայրենակցական միությունները, Իրաքահայերի Օգնութեան Հիմնադրամը, Նոր Ջուղայի Բարեկամներ յանձնախումբը, ՀԱՄԿ կազմակերպությունը, Հայ Կրթական Հիմնարկը, Դարթեան-Մարիամեան Կրթական Հաստատությունը, Կալֆորնիայի Հայ Գրողների Միությունը, Հայ Վետերաննի Միությունը, Հայ Արիական Բռունցքը, հասարակական գործիչներ եւ մտաւորականներ՝ Ստեփան Թօփչեանը, Պօղոս Քուբելեանը, Խորէն Արամունին, Պետրոս Հաճեանը եւ բազմաթիւ ուրիշներ, կոչ արուեց խումբերամ մասնակցել Կիրակի, Սեպտեմբերի 27-ին, Գլենդէլում կայանալիք ժողովրդային հաւաքին:

Հանդիպումը փակ յայտարարուեց երեկոյեան ժամը 9:30-ին: